

ՏԱՆԹԵԵԻԻՐԳՈՐԾԸ

(Շար. տե'ս «Բազմ», 1965, Բ. 11-12, էջ 301)

Դժոխսի անդունդներուն մէջ

Անժխտելի է՝ թէ ո՛չ մէկ քերթող, հին կամ նոր, ունեցած չէ՝ այն կրակոտ, դօրեղ ստեղծագործող միտքը կամ երեւակայութիւնը, ինչ որ ցոյց կու տայ Տանթէի քերթուածին մէջ, ուր իւրաքանչիւր նիւթին համեմատ՝ որոշ աստիճաններ կամ խառնուրդներ կը դնէ գոյներու, որոշ ցայտումներ, եռումներ:

Դժոխքի նկարագրին մէջ՝ յուզուած, զրդուած բան մ'ունի. ոճը՝ ուժղին եւ բուռն է. մարդ անձկութեամբ է որ կը հետեւի քերթողին, մղձաւանջի մը ծանրութեան տակ ճնշուած: Մերթ խոնջ կը զգանք մեզ՝ խորապէս կրելէն, զգուած ու քստմնած՝ մեր առջեւն անցնող ահռելի իրերէն, զրեթէ հեղձամահ՝ այն խաւարչուտ եւ նոզկալի օղէն, յափրացած՝ մեղքին ժանտահոտութիւններէն: Դառն, խիստ, զայրացկոտ քերթութիւն մ'է, որ մերթ դարհուրանքի սարսուռ մը կու տայ, մերթ արցունքով կը լեցնէ մեր աչքերը, եւ միշտ տուայտանքի ու տառապանքի մէջ կը պահէ մեզ՝ իրր անդարմանելի աղէտի մը առջեւ: Ընթերցողին միտքը կը մթաղնի, կ'այլալլի, ապիրատութեան, տառապանքի ու ցաւերու այն սանդաղին խուճապին ներքեւ, կը կորսնցնէ ամէնօրեայ կեանքին զգացումը:

Մտնենք արդ Տանթէի եւ Վիրգիլիոսի հետ՝ դժոխքին դաւիթը, ուր կը կարգանք տարտարոսի դրան վերտառութիւնը.

Աղէտաւոր քաղաքն՝ ինծմէ կ'երթցուի,
Յաւերթական ցաւերն՝ ինծմէ կ'երթցուի,
Դատապարտուած հոգւոյ՝ ինծմէ կ'երթցուի:

Արդարութիւնը դրդեց վեհ Արարիչս,
Զիս քստեղծեց աստուածեղէն գորութիւնն,
Իմաստութիւնը վսեմ՝ սէրն առաջին:

Ինէ առաջ քստեղծուեցան լոկ յաւերթ
Արարածներն, եւ կը մընամ ես յաւիտ.
Դուք մըտնողներ, մէկդի քողէք ամէն յոյս:

Այս մթին եւ տխուր խօսքերը կ'այլադրեն Տանթէն, որ՝ քաջալերուած Վիրգիլիոսէն՝ ներս կը մտնէ դժոխքին դռնէն. եւ ահա կը լսէ հառաչներու, ողբերու, ճիչերու խառնաձայն աղմուկ մը, քրտարմանքի զոռում-զոչումներ, մոռունջներ, կատաղութեան սուր շեշտեր, որոնք կը թնդացնէին տարտարոսին որմերը: Այդ եղկելի հոգիները՝ վատերն էին, անդորմները, խոշոր գոռեխներէ ու պիծակներէ խայթուած անդադար, որոնց արիւնը՝ խառնուելով արցունքին՝ վար կը հոսէր եւ կը ծծուէր զազրատեսիլ որդերէ:

Քայլ մը անդին՝ կը բացուի Ախերոնեան խորափրտ անդունդը, ինը համակեզրոն պարունակներու բաժնուած, ձաղարաձեւ, երթալով կը նեղնայ ու կը սեղմուի մինչեւ յատակը, ուր՝ սառնարանի մը մէջէն դուրս ցցուած՝ կ'իշխէ սոսկավիթխար Սաղայէլը, կէս մարմնով սուզուած սառերուն մէջ: Ախերոն՝ ցաւերուն դեպը՝ կը բաժնէ զիրենք դժոխքէն, եւ հոն կը սպասեն հաղարաւոր մեղաւոր հոգիներ, որ զայ Բարոնթէ՝ դժոխքի ծերունի դժնէ նաւավարը՝ զիրենք միւս սպին անցընելու: Այս պահուն՝ սոսկալի որոտում ու փայլակ մը կ'ահարեկէ Տանթէն, որ զարհուրած՝ կ'իսամեռ գետին կ'իյնայ:

Դժոխսի ինը պարունակները

Առաջին պարունակին մէջ է լիմպոսը, ուր կան անմեղ տղաներ՝ որոնք չեն մ'կըրտուած, հեթանոսութեան բոլոր մեծամեծ մարդիկը, քերթողներ, փրկսոփաներ, դիւցազներ, այլ մարդիկ ու կիներ՝ որոնք բնական լոյսով արդարացեալ են: Հոն է Վիրգիլիոսի բնակարանը, եւ ցոյց կու տայ չորս պատկառելի ծերունիներ, ամէնքն ալ դափնեպաշտ. Հոմերոս, Որատիոս, Ուլիլիոս, Լուկանոս. հինգերորդն է ինքը Վիրգիլիոս, եւ Տանթէ կ'ընդունուի անոնց խումբին մէջ՝ իրր վեցերորդ: Ասոնք ուրիշ պատիժ չունին, բայց միայն «ապրիլ փափաքով՝ առանց յոյսի»:

Երկրորդ պարունակին դրան առջեւ կեցած է Մինոսը, խոժոռ աչքերով, ահռանքը կը ճտելով. անիկա մեղաւորներուն դատաւորն է, եւ յետ դատելու՝ կ'իջնէ զանոնք պոչովը իրենց պատշաճ տեղերը: Հոն են վաւաշոտ մարմնապաշտ հեշտասէրները, որոնց մէջ կ'երեւին Շամիրամ, Կղէսպատրա, Հեղինէ, Թրիսթան, Ֆրանչեսքա տա Ռիմինի, որոնք ողորմուկ ձայներով կը ճչեն, կը կառաչեն, կը կափկափեն, կը հայհոյեն Աստուծոյ դօրութիւնը. դժոխային բքայոյզ մըրիկ մը անդուլ կը քշէ, կը պտուտքէ մոլեղնութեամբ այդ հոգիները:

Երրորդ պարունակին առջեւ կեցեր դառնաձէր Կերերեոս՝ այլանդակ դաղանը, երեք բերնով, կարմիր աչքերով, ճարպոտ մօրուքով, ձեռքերը՝ խոշոր եւ սուր եղունգներով, որոնցմով կը քերթէ ու կը ճանկատէ հոգիները: Երբ տեսաւ Վիրգիլ եւ Տանթէ, բացաւ ու ցոյց տըլաւ բերանները եւ ժանիքները. բոլոր մարմինը կը շարժէր, կ'երերար: Վիրգիլ առաջ անցաւ, գետնէն ափ մը հող առաւ եւ որկորներուն մէջ նետեց. ասոր վրայ հանդարտեցաւ դաղանը, եւ կըցան ներս մտնել երկու քերթողները: Աս՝ որկրամոյներուն կայանն է, որոնք զիշեր ցերեկ անդադար կարծր անձրեւէ եւ կարկուտէ կը ծեծուին, այնպէս որ բոլոր մարմինը

նին կապուեցած եւ վիրաւից են այն հարուածներէն:

Այդ պարունակին չորս կողմը շրջան մը ընելով, կ'իջնեն չորրորդ պարունակը, ուր դարաներ կեցեր է Պլուտոն, խապոտ խղուրտիւնով, այլանդակ, անիմաստ բառեր արտաբերելով: Վիրգիլ կը սաստէ անոր. կը մտնեն եւ կը տեսնեն խումբ մը հոգիներ, որոնք լուկ մ'իջիկ աներեւակայելի ճիւղերով անընդհատ կը տանին ու կը բերեն, կը դրոնեն ու վեր կը հանեն կուրծքով ահագին բեռներ, ժայռեր. ասոնք են ագահներն ու շռայլները:

Ատկէ ուղելով անցնիլ հանդիպակաց ափը, թխորակ ջուրի մը ալիքներուն հետ վար կը սողան՝ սարսափելի ճամբէ մը, կը գտնեն հոն Սիքս ճախճախուտը, որուն զարշահոտ տիղմին մէջ սուզուած են բարկացոտները. անոնք իրարու հետ կը կռուին՝ ցեխոտ ալիքներուն մէջ, զիրար ծեծելով՝ կռուիներով եւ աքացիներով:

Ասկէ անցնելու համար՝ բուն իսկ Պլուտոնի դժոխաքաղաքը, Վիրգիլ նշան կ'ընէ նաւավարին՝ որ զայ զիրենք անցընելու միւս ափը, ուր կարծես կ'այլի ու կը հրէհի բոլոր քաղաքը. անոր բոցերը դուրս կը ժայթքին, կը ծառանան զէպի վեր, կարծես Սոդոմ Գոմոր ըլլար: Գարշահոտ ճախճախուտը կը պատէ Պլուտոնի քաղաքը: Հրաչէկ բարձր բուրդի մը կատարը՝ երեք արիւնախանձ կատաղիները դժոխքին, կանացի կերպարանքով, կանաչ հիւրաներով եւ օձերով պատուած. մաղերու տեղ՝ եղջերիկներ, փոքր օձեր կը պրկէին անոնց քունքերը: Իւրաքանչիւր կը ցոյց կուրծքը եղունգներով, կը ծեծէր ինքզինքը բոռնցքով, սոսկալի ճիչերով: Վիրգիլ կը մօտենայ Պլուտոնի քաղաքին դռնապան դեւերուն, որ թոյլ տան իրենց ներս մտնելու: Անոնք կը մոլեղնին, կը սպառնան եւ թոյլ չեն տար՝ որ մտնեն: Երբ Վիրգիլիոս եւ Տանթէ կ'ուզեն ետ դառնալ, յանկարծ ահագին ձայն մը կը հնչէ փրփրած ջուրին երեսը, ուսկից սոսկումով կը փախչին ու կ'անհետանան սեւ հոգիները: Հրեշտակ մըն է լուսաւոր՝ որ կու գայ, կը մօտենայ քա-

դաքին դրան, ոսկի դաւադանիկով կը բախէ, կը բացուի ինքնիրեն դուռը, ու կը տամբելով դեւերը՝ կը մեկնի: Վերդիլ եւ Տանթէ կը մտնեն. կը տեսնեն հոն կրակի փոսեր՝ շիրիմներ, որոնց մէջ հողիները կ'այրին, կ'ողբան, կ'ոռնան: Հերետիկոսապետներն են եւ իրենց հետեւողները:

Եօթներորդ պարունակին մէջ կը մըտնեն, ուր կը տանջուին մարդասպանները, բռնաւորները: Հոս այնպիսի աւերակներու կոյտեր եւ ժայռերու ճեղքուածներ կան, այնպիսի անդնդախոր դահաւէժներ, կարծես տիեզերական դետնադերձորդ սասանում մը պատահած ըլլայ: Եւ իրօք կ'իմանայ Վերդիլ, որ այդ պատահածները եղեր են՝ երբ Քրիստոս լիմպոս իջեր է՝ արդար հողիները փրկելու: Հոն է Մինտաւրոս մարդացուլը, որ տեսնելով երկու քերթողները՝ կատաղաբար ինքզինքը կը խածնէ: Հոն կը հոսի ծովածաւալ Փլեդեթոն՝ արիւնի դետակը, որուն բոցեղէն ալիքներուն մէջ կ'եռան, կը խաշին մարդասպան բռնաւորները, որոնց մէջ կ'երեւին Դիոնեսիոս բռնաւորը, Ատտիդաս, Էծծէլինոյ եւ անոնք բոլոր՝ որոնք սպաննելին ու կողպտեցին անմեղ մարդիկը: Այդ բոցավառ արիւնի դետին երկու ափերուն՝ կան հաղարաւոր կենդարոսներ, որոնք զինուած սայրասուր նետերով՝ կը վազեն շուրջը, կը խոցեն այն հողիները՝ որոնք դուրս կ'ուզեն ելլել այն բոցեղէն ճահիճէն. աղիողորմ ճիւղեր կը թնդացնեն այն խաւարին օդը: Այդ ճահիճին մօտ՝ անտառ մը կը մտնեն երկու քերթողները, անտառ մը՝ ուր ո'րեւէ հետք կամ ուղի չկայ. ծառեր՝ սեւ ճիւղերով, ոստախիտ, ծուռումուռ, փոխանակ պտուղի՝ թուռաւոր փուշեր ունին: Ծառերուն վրայ բռնած են երեք ճիւղաղ Արպեայ քոյրեր, լայնաթեւ, մարդաղէմ, ճապաւոր ոտքերով, ահագին փոքով՝ փետրալից, կը կռնչեն գարշելիօրէն: Անտառին մէջ կը լսուին ճիւղեր, հառաչներ, բայց ո՛չ ոք կայ: Տանթէ, հետաքրքիր, Վերդիլ թելադրութեան վրայ՝ ճիւղ մը կը փրցնէ. եւ ահա ճիւղը դայրաղին կը դօշէ: «Ին-

չո՞ւ զիս կը փրցնես»: — Տանթէ սարսափով ետ կը քաշուի, մէկդի կը նետէ ճիւղը. ծառը կը կրկնէ. «Մենք ալ քեզի պէս մարդիկ էինք եւ կոճղ դարձանք», եւ այս խօսքին հետ՝ դորշ արիւն եւ արցունք կը թափէ: Եւ կը պատմէ ան՝ որ Փրեդերիկոս կայսեր քարտուղարն էր՝ Պետրոս տէլլէ Վիննէ անունով, եւ թէ անձնասպան եղեր է՝ վրան անիրաւ զրպարտութիւն մ'եղած ըլլալով. եւ թէ այդ բոլոր ծառերը՝ անձնասպաններն են:

Եօթներորդ պարունակին մէջ կը տանջուին՝ կրակէ տեղատարափ բոցերու տակ, որոնք անդուլ կ'այրեն՝ կը մրկեն զիրենք, Աստուծոյ եւ բնութեան դէմ մեղանշողները. ատոնց մէջ կը ճանչնայ Տանթէ իր ուսուցիչը՝ Պրունեթթոյ. Լաթինի, որ զղուանքով կը խօսի Փիրենցէի եւ անոր բնակիչներուն դէմ. կը պատմէ թէ կը տանջուի հոն ինքը, սողոմականութեան մեղքին համար, եւ իրեն հետ նոյն տանջանքին դատապարտուած են ուրիշ դրադէտներ եւ եկեղեցականներ: — Հաղիւ հեռացած այդ պարունակէն՝ կը տեսնեն վարը Գերիոն կոչուած ճիւղաղը, սըրածայր պոչով՝ որ կը ծակէ լեռ, կը փշրէ պարիսպ ու շէնք, կը պղծէ տիեզերքը. արդար մարդու կերպարանքով, բայց մարմինը՝ օձ կը վերջանայ. երկու մաղոտ ճիւղան ունի. կռնակը, կուրծքը, կողերը՝ լի են նկարէն հանդուցներով եւ բոլորչի բիծերով. ամբողջ պոչը՝ պարապին մէջ կը շարժէր, կ'ոլորէր, վեր կը դալարէր, զինելով անոր ծայրը՝ կարիճի պէս: Վարը մարդիկ, նստած խմբովին, ձեռքերով կը պաշտպանեն զիրենք բոցերէն՝ որ կը տեղան երկինքէն. ամէն մէկը՝ քսակ մ'ունի վիղը՝ նշան իրենց արծաթափրութեան, իսկ քսակներուն մէջ կան իւրաքանչիւրին զինանշանները:

Վերդիլ եւ Տանթէ կը հեծնեն Գերիոնի շալակին վրայ. հրէջը պոչը շարժելով՝ օձաձուկի դալարութեամբ՝ ահագին հողմով եւ աղմուկով, օդին եւ ջուրին մէջ պտուտքելով, կ'իջնէ այնտեղ՝ ուր ճիւղեր կը լսուին, ու կը դնէ զիրենք ժայռին ըստորտը:

Ութերորդ պարունակին մէջ՝ կաւատներուն պատիժներն են, որոնք կը տանջուին կլկլանքի փոսերու մէջ խորասուզուած՝ խարաղանուելով դեւերէն: Այդ խորափիտ վիհին պատերը բորբոսով ծեփուած են, աչքերուն եւ ոնդունքին պփռալի: Հոն՝ աղբակոյտին մէջ՝ կը տեսնէ Տանթէ իրեն երկու ծանօթներ թոսքանայէն:

Նոյն պարունակին մէջ են նաեւ Սիմոնականները, որոնք բոցի եւ կրակի փոսերու մէջ գլխիւայր ցցուած են, միայն ոտքերին դուրս մնացած: Անոնցմէ մին՝ բարձրաստիճան եկեղեցական մը, երբ լսեց որ Տանթէ դառն ու ծանր խօսքեր կ'ուղղէ իրեն եւ բոլոր սիմոնական կղերականներուն դէմ, զայրացած՝ սկսաւ ուժգնօրէն ցնցել իր կրակ կտրած ներբանները:

Նոյն պարունակին ուրիշ մէկ շրջանակին մէջ, կը նկարագրէ ահագին լիճ մը՝ եռացած կարածիւթի, որ պղպղակելով՝ թանձր եւ դարչելի հոտ մը կը սփռէ: Տանթէ կը նմանցնէ դայն Վենետիկի նաւարանին, ուր կ'եռայ, կ'ըսէ, կ'չուն կարածիւթը, մէկը՝ ցուկէն կը զարնէ, միւսը՝ խելքէն, մին՝ թի կը շինէ, ուրիշ մը՝ չուան կը դարձնէ. այսպէս ալ հոս՝ դեւերը, մէկը եռացած կարածիւթի լիճին մէջ կը նետէ խաբերանները, ուրիշ մը՝ ժանիքով տակը կը հրէ, երրորդ մը կը հարուածէ ժանիքով՝ երբ մէկը դուրս կը հանէ զլուխը կամ ձեռքը: Եղկելիներ. եթէ վայրկեան մ'իսկ մէկը դուրս հանէ կռնակը կամ քիթը կամ աչքերը՝ քիչ մը զովանալու համար, ահա դեւերը սուր երկփանին կը խոթեն անոնց աչքին՝ քիթի կամ միսին մէջ, վեր կը հանեն զիրենք օդին մէջ, եւ յետոյ ուժգնօրէն փոսին մէջ կը նետեն: Այն ատեն ահաւոր կռուութեամբ, զղուլտութեամբ դեւերուն եւ մեղաւորներուն միջեւ, ժանիքով, եղունգներով, սկուաններով, կը բղբտեն զիրար, կը խածատեն. ասոնք բոլոր խաբերաններ ու զեղծարարներ են:

Դեւերը կը յարձակին Վերդիլիոսի ու

Տանթէի վրայ. այն ատեն Վերդիլիոս գրկելով Տանթէն՝ պաշտպանելու համար անոնց յարձակումէն, դառ ի վայր թռած մը կը սահին ու կը սողան, եւ հասնելով հովիտի մը խորը, կը տեսնեն հոն խումբ մը մարդերու՝ որոնք կապարէ թանձր վերարկուներ հագած՝ արտաքուստ թէեւ ոսկեփայլ, խոնջ արտասուալիր, դանդաղօրէն կը քալեն, կ'երթան. ասոնք՝ կեղծաւորներն են: Քիչ մը անդին՝ կը հանդիպին մարդու մը, որ երեք ցիցերով խաչուած է դետինը, որուն վրայէն կոխելով կ'անցնին դեւեր եւ մեղաւորներ. «Ատիկա Կայիափան է», կ'ըսէ կեղծաւորներուն շարքէն մէկը, «եւ վարը փոսին մէջ կը տանջուի՝ անոր Աննա աները»:

Մերթ ժայռերու և ճեղքուածներու վրայէն մազլցելով, մերթ սողալով կամ սահելով դէպի վար, կը հասնին խոշոր փոսի մը մօտ, ուր ահուելի, դաղբելի տեսարան մը կը բացուի առջեւին. շեղջակոյտ մը՝ բաղմակերպեան, խայտաբղէտ օձերու, որոնց մէջէն կը վազէին մերկ ստուերներ՝ ձեռքերին իրենց ետեւ կապուած օձերով, որոնք իրենց խայթոցները անոնց կռնակը կը մխէին եւ պոչով կ'ոլորուէին, կը պրկէին զանոնք: Այդ պահուն, ահուելիօրէն կատաղի օձ մը կը նետուի մէկուն վրայ, կը խայթէ վիղը, որուն խկոյն այրիլ, ածիւն դառնալ եւ վար ինչալը մէկ կ'ըլլայ: Օձերէն այսպէս տանջուողները՝ զողերն են, մանաւանդ սրբազան իրերու դողերը, որոնցմէ է Փիսթոյացի Վանի Փանուշչի անունով մէկը, որ ճանչնալով Տանթէն, կը խոստովանի թէ այն պատիժին դատապարտուած է՝ Փիսթոյացի եկեղեցիին չքնաղ սպանները դողցած եւ ծախած ըլլալուն համար, եւ կը սկսի հայհոյել զԱստուած. որուն ի պատիւ, վիթխարի օձ մը կը յարձակի՝ կը փաթթուի անոր վիղին, ուրիշ մը անոր թեւերը կը կապէ, եւ այսպէս կ'իյնայ՝ մօխի կը դառնայ: Վերդիլ եւ Տանթէ ետ կը դառնան, կը տեսնեն կենտաւրոս մը՝ լի մոլուցքով, բոլոր մարմնով՝ եւ ձեռքերը օձերով փաթթու-

լած, ծոծրակին տակ՝ բաց թեւերով վիշապ մը՝ որու բերնէն հուր կը ժայթքէր. կակոսն էր՝ որ Հոռմի Աւենտին լեռան ժայռերուն ներքեւ արեան լիճեր ձեւացեցեր էր:

Անցնելով դանազան փոսերէ, որոնց մէջ կը կրէին, կը տառապէին մեղաւորները այսպիսի տանջանքներով՝ զորս Տանթէի երեւակայութիւնը միայն կարող էր ըստեղծել, կը հասնին ուրիշ խոր փոս մը, որ այսպիսի դաղիր տեսարան մը կը ներկայացնէր, որուն ազօտ դաղափար մը պիտի չկրնան տալ՝ եթէ աշխարհիս պատերազմներուն բոլոր խոց, վիրաւոր, անդամատեալ պատառոտուն մարմինները մէկտեղ բերուէին: Հոն՝ մէկը գլուխէն մինչեւ ոտքը՝ երկուքի ճեղքուած է, միւսին սրունքներուն մէջ կախուած են աղիքները, ուրիշի մը կուրծքը պատռուած՝ կ'երեւան սիրտը, լեարդը. ուրիշ մը ինքզինքը կը բլբլէ սուրի հարուածներով. մէկուն գէմքը ճեղքուած է ծնօտէն մինչեւ դանկը. ասոնց մէջ են բոլոր անոնք, ինչպէս Փիւր Մետիչի, որոնք զբոսաւորութեան սերմնացաններ եղած են եւ քաղաքական պառակտումներ առաջ բերած: — Այդ դատապարտուածներուն մէջ կը տեսնէ Տանթէ իրան մը՝ որ առանց գլուխի կը քալէր, մազերէն վեր բռնած՝ ցոյց կու տար իր կտրուած գլուխը: Այդ անձը՝ Պորնիոյի Պերթրամէն էր, այդ պատիժին դատապարտուած՝ զինած ու դըրդուած ըլլալով իշխանի մը որդին հօրը գէմ:

Արդէն զժողովին վերջին պարունակին մէջն ենք, եւ ամէնէն խոր փոսերէն մէկը, ուր ճիւղեր եւ ողբեր կը լսուին, դարչահատութիւն մը կը տարածուի՝ ինչպէս նախած ու փտած անդամներէ: Հոս կը պատժուին նենգաւորները, խարդախները, որոնցմէ ոմանք փորկերուն վրայ պառկած՝ դամուած են, ուրիշներ՝ յափսթերս կը սողան, կան՝ որ եղունգներով կը ցտեն ինքզինքնին, եւ վար կը թափեն մարմնին միւսերը, կեղեւները. կան ալ՝ որ կատաղօրէն կը վազեն՝ խածնելով իրենց առջեւ ելլողները, կամ ջրգողուած՝

սաստիկ ծարաւով կը տանջուին, կամ այլ-որդ տենդով կը տառապին. ասոնք են դրամանենդերը:

Եւ հա՛ա, ահագնազ ոչ փողի մը ձայնը կը լսուի՝ որուն քով ո՛ւր կը մնան որոտումներուն դռում դռումները: Տանթէ աչքերը այն կողմ կը դարձնէ եւ կը թուի տեսնել բարձրաբերձ բուրգեր: Հսկաներ են անոնք, կ'ըսէ Վիրգիլիոս, որ պորտներէն վար՝ ջրհորի մէջ սուղուած են: Առաջին հսկան է՝ Ներբոլթ, թագաւորը, խոշոր շեփոր մը վիզը անցուցած, անհասկնալի, ալլանդակ՝ խժաւուր բառեր կ'արտաբերէ, ինքն ըլլալով պատճառ լեզուներու խառնակութեան. «Ուա՛ֆէլ մայ ամէ՛ք իզա՛պի ալմի» (մեկնիչներէ ոմանք՝ արարեքէն կը համարին այս բառերը, իբր թէ ըսել ուղէր. «Բարձրացուր իմ փառքս անդունդին մէջ, ինչպէս պայծառացաւ աշխարհի վրայ»): Անոր քով կեցած է ուրիշ մը, աւելի վիթխարի ու վայրագ, ձախ ձեռքը կապուած կուրծքին վրայ, աջը՝ կապուած ետեւը, երկաթ շղթայով. Փիւրգէս է ան՝ մէկը Արամազդի գէմ կռուող տիտաններէն, որոնք շանթահարուած ինկան տարտարոսին մէջ: Երրորդը՝ Անդէոսն է, որ Հերակլէսի հետ կռուելով՝ սպաննուեցաւ անկէ: Փիւրգէս ինքզինքը ցնցած տեսնուած զնօրէն՝ Տանթէ սարսուռով եւ սարսափով լեցուեցաւ, եւ անպատճառ «վա՛խէս պիտի մեռնէի, կ'ըսէ, եթէ տեսած չըլլայի իր շղթաները»:

Վիրգիլ եւ Տանթէ՝ Անդէոսի ափին մէջ կը կենան՝ որ մեղմով կ'իջեցնէ զիրենք զժողովին յատակը, ուր կան ու կը տանջուին երեք խումբ մատնիչներ. ա. Որոնք իրենց եղբայրները կամ ազգականները մատներ կամ սպաններ են, որուն համար կայէմեան կ'ըսուին. բ. Որոնք իրենց հայրենիքը մատներ են, Անտեմոքեան կ'ըսուին. եւ գ. Որոնք իրենց տէրերը կամ բարերարները մատներ են. Յուդայեան կ'ըսուին: Հոս, պարունակին յատակը կազմուած է ամենակարծր սառոյցով, ճախճախուտ Կոկիտոնէն ձեւացած՝ որ կը հակի դէպի կեղբորն: Այս շրջանակին

մէջ մտած տեսն՝ Տանթէ ձայն մը կը լսէ. «Զգուշութեամբ անցի՛ր, չըլլայ թէ ներբաններովդ կոխկռտես թշուառ եղբայրներուդ գլուխները»: Կը քալէ սառնապատ լիճի մը վրայէն, որ ապակի կը թուէր ըլլալ՝ քան թէ ջուր: Սառին մէջ սուղուած հոգիները՝ ակռանին կը կրճտէին, բերանին՝ փակուած ցուրտէն, աչքերին՝ պաղած կամ քարացած, արցունքնին՝ սառ. կտրած: Հաղարաւոր գէմքեր՝ կապուեցած, սառէն դուրս մնացած են: Տանթէ դիպուածով ոտքը գլուխի մը կը զարնէ. «Ինչո՞ւ վրաս կը կոխես՝ ինչո՞ւ կը տանջես զիս», կը պոռայ մէկը: Տանթէ այս լսելով՝ գլուխին մազերէն կը բռնէ եւ կը հարցնէ անունը. «Եթէ բոլոր մազերս ալ փետես՝ չեմ՝ ըսեր անունս», կը պատասխանէ: Ուրիշ դատապարտեալ մը լսելով անոր ողբը եւ խօսքերը, «Պո՛քքա, ի՞նչ ունիս, որ այսպէս կը հաջես», կ'ըսէ. եւ ասկէ կ'իմանայ Տանթէ նախորդին անունը եւ պատմութիւնը:

Քիչ մ'անդին, կը տեսնէ Տանթէ՝ որ ծակի մը մէջ մէկը վայրագօրէն ակռաներով խածեր է ուրիշի մը գլուխը. կը մօտենայ Տանթէ՝ հարցնելու պատճառը: Այն տեսն, բերանը սրբելով՝ այն գլուխին մազերով, որուն ծոծրակն արդէն կրճած էր, կ'ըսէ. «Պէտք է զիտնաս՝ որ եղայ կոման Ուկոլին, եւ աս՝ արհի եպիսկոպոսը Հռուգեր»:

Կը պատմէ թէ ինչպէս Փիւրգէսները՝ կասկածելով թէ ինք հայրենիքին մատնիչ եղած ըլլայ, բանտած են զինքը Կուալանտներու աշտարակին խորը, իր երկու գեռատի որդիներով եւ թոռնիկներով, եւ անօթութենէ մեռցուցեր են զանոնք: Քեր-

թուածին ամէնէն աւելի գողտր եւ սըրտաշարժ դրուազներէն մէկն է ասիկա:

Արդէն զժողովին ամէնէն ստորին յատակն ենք, խորը, ուր մատնիչները մարմնով ընկղմած են սառնարանին մէջ: Ճիշտ կեղբորն բռնած է Սաղայէլը՝ սոսկալի հրէշը, կուրծքին կէսէն՝ սառոյցներէն դուրս, այնքան խոշոր՝ վիթխարի, որ բոլոր հսկաները անոր քով գաճաճներ են: Գլուխին վրայ երեք երես ունի. մէկը առջեւ՝ արիւնագոյն, միւս երկուքը ուսերուն միջին կէտէն բարձրանալով՝ դաճաթին վրայ իրարու կը կցուէին, աջը՝ դեղին ճերմակ գոյնով, ձախը՝ սեւագոյն: Ամէն երեսին տակէն կ'ելլէին երկու թեւեր, որոնց երազ շարժումէն եւ հանած հովէն՝ կը սառէր Կոկիտոնը: Վեց աչքերով կու լար, երեք ծնօտներէն արցունք կը հոսէր՝ արիւնոտ լորձուքի հետ: Երեք բերաններով՝ երեք մեղաւորներ խածած՝ կը կրճէր, կը յօշոտէր անոնց մարմինները: Հոն է Յուդա մատնիչը, գլուխը եւ մարմինը Սաղայէլի ակռաներուն տակ, ոտքերը՝ դուրս ցցուած. միւս երկու բերաններով բռնած՝ կը փշրէ Բրուտոսն ու Կասսիոսը, Յուլիոս Կեսարի երկու մատնիչ դաւադիրները, որոնք կը դալարուին տանջանքներու մէջ:

Այս տեսարանէն ետք, Տանթէ՝ Վիրգիլիոսի վիզը պլլուած, եւ Վիրգիլիոս Սաղայէլի մազոտ կողերուն փաթթուած, իբր սանդուղով մը կ'անցնին երկրիս կեղբունէն գէպի միւս կիսագլուխը, ուր կայ Քաւարանին լեռը:

(Շար. 2)

Հ. ՅՈՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ